Եկեղեցին ունի երկու ձեռագիր, արծաթեայ կազմով աւետարան՝ «Ծաղիկ» և «Զինաւորաց»։ Այս եկեղեցում գտնըւում է «Ս. Մինաս» դպրոցը. դա մի մեծ սենեակ է, որի դրսի կողմը, աջ պատի վրայ փակցւած է հետևեալ մարմարեայ արձանագիրը.

ԴՊՐՈՑ
—
Ցամի Տեառն
1895
ի մի Մայիսի
կառուցաւ
Սուրբ Մինաս
դպրոցն այս
արդեամբ Կալկաթու
եւ ծախիւք որ ի Հնդկաստան
ազգասէր
մեռազնեաց։

Դպրոցն ունի 150 երկսեռ աշակերտներ, 1 ուսուցիչ-ուսուցչուհով (օր. Մէրխաթուն Խաչիկեան). վերջինս ուղարկւած է Նոր—Զուղայից։ Դպրոցում աւանդւում է հայերէն, թւաբանութիւն, պարսկերէն, գրութիւն, կրօն, ժամագիրք և հայոց պատմութիւն։

Գիւղում կայ երկու խանութ և եօթը ջրաղաց։

Որպէս լեռաբնակ վայրերին մօտիկ գիւղ՝ Վերին-Խոյգանը յաճախ է ենթարկւում լեռների յարձակումներին, բացի այդ, նեղացնում են նաև դրացի խանները, այսպէս Ցածի-Խոյգանի Մահմուդ խանը՝ Զարլանգցին, 1918 Յունիսին իր ձիաւոր խմբով մտնում է գիւղ և առնում 47 թուման, 42 լիտր ալիւր, 30 լիտր գարի, 12 հաւ, 3 ոչխար և 180 հաւկիթ։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	200
2	Զունևոր	10
3	Միջակ	300
4	Ունևոր	500
5	Հարուստ	160
	Ընդամենը	1170